Տ. ԽՈՐԵՆ ՔԱՀԱՆԱ ՄԱՐՈՒՔՅԱՆ

Ծնվել է 1965 թ. մարտի 8-ին Էջմիածին քաղաքում:

1972—1982 թթ. սովորել և ավարտել է Էջմիածնի № 1 միջնակարգ դպրոցը:

1982—1987 թթ. սովորել և ավարտել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի հիդրոմելիորացիայի ֆակուլտետը:

1987—1990 թթ. աշխատել է Էջմիածնի շարժական մեքենայական շարասյունում որպես ինժեներ:

1990—1991 թթ. ուսումնական տարում ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի քահանայից լսարան:

1991 թ. սեպտեմբերի 15-ին, ձեռամբ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1992 թ. փետրվարի 23-ին, ձեռամբ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է քահանա:

Այժմ իր հոգևոր ծառայությունն է կատարում հոգևոր ճեմարանում: